

կողմերու Հայոց դիպուածներու վրայօք՝ ոտման լեզուաւ յօդուածներ հրատարակեցին, այս տարիներս, որոց մասն այլ թարգմանուած է Հայերէն ի վերոյիշեալ Հանդիսի: Թէ՛ այդ երկրին և թէ՛ մանաւանդ Լեհաստանի Հայոց վրայօք՝ ասկէ 66 տարի առաջ կարեւոր տեղեկութիւններ և յիշատակարաններ հրատարակած էր տպագրութեամբ (ի վախ մեր, 1830) բազմադիւն Հ. Մինաս Վ. մեր Բժշկեան, իր Ճանապարհորդարիւն ի Լեհաստան գրոց մէջ, որ և ճոխագոյն և շատ պատուական աղբիւր է այդ կողմանց նկատմամբ: Այդ գիրքը կարգացողն կ'իմանայ, որ արդարեւ Լեհահայոց գաղթականն գերազանցեր է քան զայլ կողմանց, ոչ միայն եկեղեցական այլ և քաղաքական կարգօք, գրաւոր օրինօք, և իշխանօք, դատաւորօք և դատաստանարանաւ, գրեթէ զուգահաւասար բնիկ ժողովրդեան երկրին, զուցէ և առաւելեալ ճարտար վաճառականութեամբ, և ոչ յետնեալ ի դպրութիւնս: Ասոնց վրայօք և յատկապէս Լեմպէրկի Հայոց՝ օտարք այլ գրած են, որոց մին Պիշոյ՝ գերմաներէն, նախ (1862) անոնց օրինաց (ըստ Միխիթ. Գոշի. Die alte Recht der Armenier in Lemberg), յետոյ (1864) անոնց պատմութեան (Urkunde der Armenier in Lemberg): Սոյն իսկ այս օրերս, յետ 600 բազմադէպ տարիներու, գիտնական բնիկք երկրին սկսած են հրատարակել՝ իրենց յատուկին հետ՝ նա և իրենց հիւրական Հայոց ձեռագործ յիշատակարանները, լուսագրելով և լուսաբանելով, ինչպիսիք են եկեղեցիք, ապարանք, աղբերք, դամբանք, պատկերք, և այլն. որք և անձայն վկայք են Հայոց եկեղեցական և ուսումնական զարգացման: — Առաջնոյն նկատմամբ, ծանօթագոյն և հըռչակաւորն է Նիկողայոս (Նիկոլ) արքեպիսկոպոսի դէպքն, կրօնական յեղափոխութեամբ և միաբանութեամբ Հռովմէական եկեղեցւոյ, ըստ ծանօթ պատմագրութեան Առաքէլ վարդապետի՝ յ'ԺԷ դարու, և ի մօտ տարիներս՝ գիտնական պաշտօնէի Ռուսաց տէրութեան Պր. Կարապետի Եգեանց (Եզոֆ): Նկատմամբ երկրորդին՝ հարուստ վկայական է՝ զառ յայլոց՝ իրենց եկեղեցականաց մէկուն (Տէր Սաղովկ Պարոնչ) լեհարէն լեզուաւ գրած՝ Հայոց նշանաւոր անձանց կենսագրութիւնն, տպագրեալ ի Լեմպէրկ յամի 1856:

Թէ և նիկոլեան յեղափոխութենէն ետեւ եղած է Լեհահայոց աւելի մը տաւորական բարգաւաճանքն, բայց իրենց հնագոյն եպիսկոպոսական գահն և դատաստանարանք՝ տան գուշակել և հնագոյն զարգացումն. որոյ կըրնային վկայել և 1000 կտորէ աւելի հայերէն ձեռագիր մատեանք, շատն ի Սոյ բերուած, որք այդ կրօնական երկրիմի դիպուածին շփոթութեանց ատեն՝ ցրուեր և կորսուեր են. ո՞ գիտէ, թէ և ո՞րքան յատուկ յիշատակարանք և պատմագրութիւնք: — Այս տեսակ գրուածոց մին համարիմք հիմայ՝ մեր քով գտուած Տարեգիրքն Կամենիցի, որոյ այս անունը կու տամք, որովհետեւ գրոց սկիզբն պակսի. ԺԶ-ԺԷ դարուց գործ է, և հիմակուան դրից մէջ՝ երեսոց թուակարգն 3է կու սկսի. ըսել է թէ առաջին թուղթն կորած է. բայց ոչ այն միայն՝ այլ և շատ թուղթեր: Վասն զի ամենէն մեծ դիպուածներէն մէկը, յամի 1551 Մոլտաւիոյ Հայոց հալածանքը, երկու տու